

ՅՈՒՆԻԲԱՆԱ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

ԵՊՀ Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոն, դոցենտ

### ***Ժամանակակից հայաստանյան հասարակության միջին խավի դինամիկան***

Միջին խավը, սովորաբար, դիտարկվում է որպես հասարակության «ողնաշար», որը կատարում է հասարակության կայունացման և ներդաշնակեցման գործառույթները: Հայաստանում միջին խավն ուսումնասիրելու գաղափարը ծագեց՝ ելնելով «Հայաստանում միջին խավ չկա» տարածված կարծիքից: 2013 թվականին հեղինակը Հայաստանում միջին խավի ձևավորման առանձնահատկությունների, հիմնական բնութագրիչների ու գործառույթների, առկայության ցուցիչների և վերացման ռիսկերի վերլուծության փորձ կատարեց:

Նեովեբերյան մոտեցման համաձայն միջին խավը հիմնված է կրթության, զբաղվածության և սեփականության չափանիշների վրա, որոնք խթանում են մարդկային կապիտալի զարգացումը, ինչպես նաև շուկայական տնտեսության համատեքստում ինքնանույնականացման չափանիշի վրա: Հետազոտության արդյունքների համաձայն ժամանակակից Հայաստանում միջին խավը համապատասխանում է իր հիմնական բնութագրիչներին և կատարում է իրեն վերագրված գործառույթները, սակայն այն համախմբված չէ և իրագրել չէ երկրում որոշումների ընդունման գործընթացին և իր մասնակցության կարևորության մասին, չի նույնացնում իր ապագայի հեռանկարները երկրի ապագայի հետ, և ամենաանհանգստացնողն այն է, որ միջին խավի մեծ մասը ցանկանում է արտագաղթել Հայաստանից:

Այդուհանդերձ միջին խավի տնտեսական կապիտալի ձևավորումը չհանգեցրեց մշակութային կապիտալի ձևավորմանը, որը կկարողանար համախմբել այն և խթանել վերջինիս զարգացումը: Մշակութային կապիտալն այստեղ դիտարկվում է լայն սոցիոլոգիական իմաստով՝ ներառելով սոցիալական արժեքները, նորմալության նմուշները, պետության և երկրի նկատմամբ վերաբերմունքը, սոցիալական փոխազդեցությունը, ինչպես նաև սեփական դերի ընկալումը սոցիալական համակարգի ներքո և վերջինիս զարգացման հեռանկարները, ինքնաներկայացումը և ապրելակերպի ու ժամանցի կառուցվածքի փոփոխությունները:

**ՅՈՒՆԻԲԱՆԱ ՄԵԼՔՈՒՄՅԱՆԸ** սոցիոլոգիական գիտությունների թեկնածու է, հիմնական հետաքրքրությունների շրջանակը սոցիալական շերտավորման հիմնահարցերն են: Նա ԵՊՀ Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի դոցենտ է: Դասավանդում է Սոցիալական աշխատանքի, Հասարակայնության հետ կապեր և Հանրային կառավարում բակալավրի և

մագիստրոսական ծրագրերում 1998 թվականից: Ունի տպագրված հոդվածներ սոցիալական շերտավորման, կրթության, գենդերային հիմնախնդիրների, երեխաների պաշտպանության, փախստականների և ներառականության խնդիրների վերաբերյալ: Դասավանդումից և գիտահետազոտական գործունեությունից բացի, նա ակտիվ ներգրավված է որակական և քանակական հետազոտություններում և ծրագրերի գնահատման մեջ: Նա հաջողությամբ իրականացրել է հետազոտական և գնահատող ծրագրեր՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի, ՄԱԿ-ի փախստականների գլխավոր հանձնակատարի, Հայաստան համահայկական հիմնադրամի, Հույսի կամուրջ հասարակական կազմակերպության, Քաղաքացիական հասարակության ինստիտուտի և այլ կազմակերպությունների հետ համագործակցելով:

Էլ. հասցե՝ [yulianamelkumyan@yahoo.com](mailto:yulianamelkumyan@yahoo.com)